



Հովհաննես Թունյան

նամակ Օլգա Թումանյանին

Թիֆլիս—Ադստաֆա

31 հոկտեմբերի 1889 ամի, ի Տփլիս

Օլա ջան,

Չեմ կարող չխոստովանիլ, որ շատ ձանձրալի են ինձ համար այս օրերը, չնայելով, որ, իհարկե, միայնակ չեմ բոլորովին, ինչքա՛ն երկար են թվում ինձ այս ժամերը, այժմ ես գգում եմ հատկապես, որ ոչ ոք չէ կարող փոխարինել քեզ ինձ համար. գարնանալի բան, երագի նման են հիշում քո այստեղ եղած ժամերը: Չգալի է դառնում ինձ համար քո բացակայությունը, մանավանդ, երբ վերադառնում եմ կոնսիստորիայից կամ երեկոյան տուն եմ գալիս:

Բարևիք մեր կողմից Մուշեղին, հայրիկին, մայրիկին, Գիգուլին և Կատոյին: Շաքարն այստեղ է և խնդրում է, որ մեզ համար թեյ բերելիս իրան համար էլ մի երկու գրվանքա բերեք:

Գրիր, թե երբ եք գալու, որ գամ երկաթուղու կայարանը: Արդեն բոլորը քնած են, (ժամը 11½ է) ես եմ միայն, որ արթուն եմ և նամակ եմ գրում ասի:

Քո Հովհաննես Թումանյան

<Հ. Գ.> Օլա ջան, մոռացա գրելու, որ անցյալ գիշեր երագում քեզ տեսա. թե ինչպես, ինչ դրության՝ ափսոս մոռացել եմ: